ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փորձաքննություն նշանակելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթին (հետայսու նաև՝ Մրցույթ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

- Մրցույթի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը (կցվում է՝ Apranq elektronayin-57-62.pdf ֆայլ):
- «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից Մրցույթի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի համար ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը (կցվում է՝ 1589535834222.pdf ֆայլ):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ներկայացված բողոքի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև հիմք ընդունելով բողոքաբերի՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի՝ բողոքի լրացմամբ ներկայացված միջնորդությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով իրեն վերապահված լիազորությամբ, 19.08.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնեց նշված բողոքի շրջանակներում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության մասին՝ կողմերին ընձեռելով հնարավորություն՝ ներկայացնելու նաև իրենց կողմից առաջադրվող հարցադրումներ՝ ուղղված փորձագետին, ինչպես նաև փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կլինեն փորձաքննության իրականացման համար:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 18.08.2020թ. ներկայացված բողոքի լրացմամբ (կցվում է՝ 21.pdf ֆայլ) ներկայացվել է Signa™ Artist մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի Data Sheet-ը՝ pdf ֆորմատով (կցվում է՝ 22.pdf ֆայլ), համաձայն «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ աղբյուրը՝ INTROLAB ընկերություն:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից 24.08.2020թ. գրությամբ ներկայացվել են մի շարք փաստաթղթեր (կցվում են՝ Письмо фирмы-производителя_Signa Artist պանակ, aramqocharyan.pdf ֆայլ, Artist_DS_v1_DOC2331356_DVw DV28_01202020 (1).pdf ֆայլ) և փորձագետին առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Եթե «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի բնութագրի և հրավերով սահմանվող գնման առարկայի բնութագրի միջև առկա են անհամապատասխանություններ, ապա արդյո՞ք այդ անհամապատասխանություններն ազդում են ընկերության կողմից առաջարկվող համալիրի որակական բնութագրի վրա, ի տարբերություն այն նմանատիպ սարքավորումների բնութագրի, որն այդ մասով համապատասխանում է հրավերի պահանջներին, թե՞ ոչ և եթե ազդում են, ինչու՞:

2. Արդյո՞ք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրն իր հինգ կոճի հնարավորությամբ ապահովում է առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այլ արտադրության սարքավորումները, որոնք ունեն վեց կոճի միացման հնարավորություն:

3. Արդյո՞ք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի կոնսուլային համակարգչում գտնվող 4 միջուկները և ռեկոնստրուկցիոն հանգույցում 2 պրոցեսորներում գտնվող՝ յուրաքանչյուրի 12

միջուկներն ապահովում են առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այն սարքավորումները, որոնց կոնսոլային համակարգիչն ունի 6 միջուկ:

Այսպիսով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննության շրջանակներում նշանակել փորձաքննություն՝ ստորև շարադրված հարցերի շրջանակներում, և փորձաքննության իրականացումը հանձնարարել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Խնդրի պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. Արդյոք «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Մրցույթի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի համար առաջարկված տեխնիկական բնութագիրը համապատասխանու՞մ է General Electric Healthcare ապրանքային նշանով ներկայացված Signa™ Artist մակնիշի համար սահմանված տեխնիկական բնութագրին (ուսումնասիրության ենթակա հիմք՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի և «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված Signa™ Artist Data Sheet-եր):

2. Եթե համապատասխանում է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Մրցույթի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի համար առաջարկված տեխնիկական բնութագիրը General Electric Healthcare ապրանքային նշանով ներկայացված Signa™ Artist մակնիշի համար սահմանված տեխնիկական բնութագրին, ապա ուսումնասիրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը և «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված

տեխնիկական բնութագիրը և տալ եզրակացություն՝ արդյոք «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանու՞մ է Պատվիրատուի կողմից «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերով մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին, այսինքն՝ արդյոք վերջինիս կողմից թիվ 1.1 Հավելվածով ներկայացվել է Պատվիրատուի անհրաժեշտ կարիքին համապատասխա՞ն ապրանք, թե՞ ոչ:

3. Եթե «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի բնութագրի և հրավերով սահմանվող գնման առարկայի բնութագրի միջև առկա են անհամապատասխանություններ, ապա արդյոք այդ անհամապատասխանություններն ազդու՞մ են ընկերության կողմից առաջարկվող համալիրի որակական բնութագրի վրա, ի տարբերություն այն նմանատիպ սարքավորումների բնութագրի, որն այդ մասով համապատասխանում է հրավերի պահանջներին, թե՞ ոչ և եթե ազդում են, ինչու՞:

4. Արդյոք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրն իր հինգ կոճի հնարավորությամբ ապահովու՞մ է առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այլ արտադրության սարքավորումները, որոնք ունեն վեց կոճի միացման հնարավորություն:

5. Արդյոք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի կոնսուլային համակարգչում գտնվող 4 միջուկները և ռեկոնստրուկցիոն հանգույցում 2 պրոցեսորներում գտնվող՝ յուրաքանչյուրի 12 միջուկներն ապահովու՞մ են առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այն սարքավորումները, որոնց կոնսոլային համակարգիչն ունի 6 միջուկ:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**